ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

03.02.2016 14:05

Հարգելի փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը տեղեկացնում է, որ **2016 թվականի փետրվարի 20-ին (շաբաթ օր) ժամը 10:00-ից սկսած** նախատեսվում է փաստաբանների միջև կազմակերպել շախմատի մրցաշար:

Շախմատի մրցաշարը տեղի կունենա ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Ջաքիյան 2, 4-րդ հարկ, Մեծ դահլիճ)**:**

Մրցաշարին մասնակցելու համար խնդրում ենք նախապես գրանցվել, որպեսզի փաստաբանների պալատը հնարավորություն ունենա մասնակիցների քանակին համապատասխան ապահովել մրցաշարի անցկացման համար անհրաժեշտ պարագաները (շախմատներ, ժամացույցներ և այլն):

Մրցաշարին մասնակցելու համար կարող եք գրանցվել ***մինչև 2016 թվականի փետրվարի 17-ը ներառյալ***՝ info@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին հաղորդագրություն ուղարկելու (հաղորդագրության մեջ խնդրում ենք նշել Ձեր անունը, ազգանունը, փաստաբանական գործունեության արտոնագրի համարը, ինչպես նաև բջջային հեռախոսահամարը) կամ 600-701, 600-702 հեռախոսահամարներով զանգահարելու միջոցով:

Մրցաշարի հաղթողների համար նախատեսվում են մրցանակային տեղեր:

ՀՀ փաստաբանների պալատի
մարզամշակութային ակումբ

Առաջարկվող նորություններ

20.02.2016ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՐԿՆԱԿԻ ՉԵՄՊԻՈՆ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԽԱՂ Է ԱՆՑԿԱՑՐԵԼ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԵՏ. ՊԱԼԱՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՇԱԽՄԱՏԻ

ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })